

Մատենագիրք Հայոց. Անթիլիաս-Լիբանան, 2003, հ. Ա, 1288 էջ, հ. Բ, 2601 էջ.  
Զ. Եկավյանի մուտքի խոսքով հանդերձ:

Հայոց գրավոր մշակույթն ունի բազմա-  
դարյան հարուստ ավանդույթներ՝ ստեղծ-  
ված դարերի ոլորաններով անցած բազում  
նվիրյալների անդուլ ջանքերով: Մեր այ-  
սօրվա սերունդը այդ ավանդույթների հա-  
վատարիմ պահպանն ու շարունակողն է:  
Նման առաքելության դրսևորում է նաև  
Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի  
օրհնությունից հետո Գալուստ Կյուլպենկյան  
հաստատության Հայկական բաժնի գործա-  
դիր տնօրեն Զավեն Եկավյանի մտահղաց-  
մամբ և Հայրենասիրական նվիրյալ ու ազ-  
նիվ ջանքերով սկիզբ դրված «Մատենա-  
գիրք Հայոց» Հայագիտական մատենաշա-  
րը, որն ընդգրկելու է V–XVIII դդ. Հայոց  
գրականությունը: Այդպիսով, ուսումնասի-  
րողը կարող է իր տեսահորիզոնում պահել  
աղբյուրագիտական ողջ համապատկերը, Զ.  
Եկավյանի արտահայտությունից՝ «Իրագոր-  
ծելու և մշակելու համադրական ավելի խո-  
րացված աշխատանքներ» (հ. Ա, էջ 5): Մա-  
տենաշարն առաջին անգամ պետք է իրա-  
կանացին Հայ մատենագրության տպագիր,  
մասամբ ձեռագիր բնագրերի քննահամե-  
մատական ամբողջական հրատարակությու-  
նը: Այն էպպես նպաստելու է Հայագի-  
տության տարբեր ճյուղերի՝ պատմագի-  
տության, լեզվագիտության, բանահյու-  
սության, ազգագրության համակողմանի  
ուսումնասիրման գործին, աղբյուրագիտա-  
կան լիակշիռ ու հավաստի հենք է դառնա-  
լու արևելագիտության, բյուզանդագի-  
տության կնճռոտ խնդիրների լուծման, ժա-  
մանակագրական և այլ բնույթի ճշգրտում-  
ների համար:

Մատենաշարի Ա և Բ հատորներում ամ-  
փոփված են Հայոց Ոսկեդարի դասական  
Հայ հեղինակների հրատարակված լավա-  
գույն ղիտահամեմատական բնագրերը,

նաև նոր կազմված գիտաքննական բնագ-  
րեր, անտիպ գործեր: Բնագրերը հիմնակա-  
նում օժտված են հակիրճ ներածականնե-  
րով, մատենագիտական և այլ բնույթի  
ցանկերով: Ուսումնասիրողի աշխատանքը  
դյուրացնելու նպատակով համարակալված  
են բնագրերի բոլոր նախադասությունները,  
բարեշտկված են նախորդ հրատարակու-  
թյուններում եղած վրիպակները, ինչպես և  
տարբերակները՝ անհրաժեշտ կարգա-  
համարներով:

Ոսկեդարի Հայ մատենագիրները Հայ  
ժողովրդի հոգևոր դոյապահպանման ուճ-  
վիրաններն էին, որոնք սրբագործեցին Հայ  
ոգու հաղթանակը սասանյան խավարակու-  
աշխարհակալության և նրա նվիրագործած  
կրոնի՝ զրադաշտականության հորձանքի  
դեմ: Հայ մատենագիրներին միացում է  
այն ընդհանուրը, որ ներհատուկ է Հայոց  
ազգային ոգուն, այն է հոգևոր հարստա-  
ցումը, ձգտումը գեղեցիկին ու վսեմին:  
Նրանց երկասիրած գործերի շնորհիվ մեր  
ժողովուրդը չմնաց անգն՝ հոգևոր մար-  
տադաշտում, վերահասու եղավ պատմութ-  
յան ղոհասեղանին նետված Հայոց անցյալի  
կտակած ճակատագրին, միշտ նորոգվեց  
հոգևորապես, համաշխարհային գիտութ-  
յան առջև հառնեց իբրև քաղաքակիրթ,  
հոգևոր ու պետական կենսունակությամբ  
օժտված ազգ:

Մատենաշարի Ա հատորում ընդգրկված  
են 13 հեղինակների գործեր, որոնց առաջ-  
նեկը Գրիգոր Լուսավորչին վերագրված  
«Յաճախապատում ճառքն» է, հաջորդը  
նրա անունով պահպանված կանոնախու-  
մը, որը նպատակ ուներ օրինադրել Հայաս-  
տանի քաղաքացիական, Հայ Առաքելական  
Եկեղեցու ներքին իրավահարաբերությու-  
նները, երկրում սերմանել քրիստոնեական ի-

րավակեցություն: Կանոնախմբի հետ որոշապես աղերսվում է հատորում տեղ գտած «Կանոն սրբոյն Գրիգորի Պարթևի, դարձեալ հարցումն և պատասխանիք նորա» գրվածքը, որտեղ արծարծված են կրոնաբարոյախոսական խնդիրներ: Տրված է նաև հայոց Արտաշես I թագավորի որդի Արտավազի մասին հյուսված պատմական զրույցի համառոտ շարադրանքը: Իրան հետևում է Սահակ Պարթև կաթողիկոսի անունով մեղ հասած կանոնախումբը, որտեղ լուսախորհուրդ իրավահայեցութեամբ կանոնակարգված են դարաշրջանի հայ իրականութեան կրթալուսավորչական գործընթացները, ամուսնաընտանեկան հարաբերություններին, եկեղեցու սլաշտամունքային արարողակարգին, հոգևոր դասի սեփականատիրական իրավունքին առնչվող խնդիրները:

Հատորում գետեղված հաջորդ վավերաթուղթը Կ. Պոլսի Պոռկ պատրիարքին Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի հղած թուղթն է՝ արտատպված «Գիրք թղթոց» ժողովածուից<sup>1</sup>: Թղթի նպատակն էր պարզաբանել նեստորամիտ դադափարաբանների հետ Հայոց եկեղեցու հայրերի ունեցած վիճահարույց խնդիրները, հավաստել վերջիններս հավատարմութունը նիկիայի և եփեսոսի տիեզերաժողովների ընդունած վարդապետութեան նկատմամբ: Նույն թղթին հարում է Մելիտենի Ակակ եպիսկոպոսին Սահակ Պարթևի ուղարկած պատասխան-թուղթը<sup>2</sup>, որտեղ շեշտված է հայ եկեղեցու անհաշտ դիրքավորումը աղանդավորների նկատմամբ:

Այնուհետև Ա հատորում տեղ է գտել Սահակի ու Մաշտոցի շնորհասուն աշակերտ Կորյունի «Վարք Մաշտոցի» երկասիրությունը՝ Մ. Աբեղյանի կազմած քննահամեմատական բնագրի հիման վրա<sup>3</sup>: Կորյունի հեղինակած գործը վավերական

սկզբնաղբյուր է հայոց այբուբենի հանճարեղ ստեղծող Մեսրոպ Մաշտոցի կյանքի ու գործունեության և հարակից պատմական իրողությունների մասին: Ժողովածուի այս հատորում տրված են նաև Կորյունի երկի համառոտ խմբագրությունները՝ ճառընտիրյան և տոնականյան տարբերակները, որոնք ստեղծվել են հետագայում և օգտագործվել Մաշտոցին նվիրված տոնահանդեսին՝ եկեղեցիներում ընթերցելու համար:

Հատորում ընդգրկված հաջորդ գործը ոսկեդարյան հայ դրականության մեծարժեք կոթողներից մեկը հանդիսացող Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» աշխատությունն է, որն ունի պատմական և գեղարվեստական անառարկելի արժանիքներ: Հայրենասիրության, հայ եկեղեցունկատմամբ նվիրվածության գաղափարն է շնչում նրանում: Երկը թեև սկսվում է երրորդ դարի վերջերի, սակայն իրարես իր ամբողջական գործ է, ինչը հավաստված է նույն դարի վերջերի սկզբում, հեղինակի «Ի սկիզբն» արտահայտությամբ<sup>4</sup>: Փավստոսի երկը հրատարակված է վենետիկյան չորրորդ տպագրության հիման վրա<sup>5</sup>:

Ա հատորում վերատպված հաջորդ երկասիրությունը Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» աշխատությունն է, որը ժամանակին դարձավ Հայոց եկեղեցու դադափարական զինանոցը մանիքեականության, զրադաշտականության և աղանդամետ գանազան հոսանքների դեմ մղած պայքարում: Հատկապես հրատապ նշանակություն ունեն զրադաշտականության դեմ մղվող պայքարը: Հեղինակը ոչնչացնող քննադատության է ենթարկում այդ կրոնի հիմունքները: Եզնիկի բյուրեղահայտ մտքերը 450–451 թթ. ժողովրդական պատերազմի նախօրեին հայ մարտիկների մեջ սնուցեցին հայրենաշունչ գաղափարներ՝ նրանց ոգեվառելով պայքարի ելնել հայրենիքի պատիվն ու ազատությունը պաշտպանելու

<sup>1</sup> Գիրք թղթոց. Թիֆլիս, 1901, էջ 9–13:  
<sup>2</sup> Ըստ «Գիրք թղթոց» ժողովածուի (էջ 16–18):  
<sup>3</sup> Կորյուն. Վարք Մաշտոցի, աշխ. Մ. Աբեղյանի, Երևան, 1941:

<sup>4</sup> Փ ա լ ս տ ո ս Բ ու զ ա ն դ. Պատմություն Հայոց, III դարվածություն (Մատենադիրք Հայոց. հ. Ա, էջ 278):  
<sup>5</sup> Տե՛ս Փաւստոսի Բուզանդացու Պատմություն Հայոց. Վենետիկ, 1933:

Համար: Ի դեպ, նշելի է, որ Եզնիկը գտնուած էր, որ անհատներն ու ժողովուրդներն իրենք են իրենց ճակատագրի կերտողները<sup>6</sup>: «Եղծ աղանդոց» երկը կարևոր սկզբնաղբյուր է նաև իմաստասիրության, տիեզերագիտության, բժշկության, բուսաբանության, տրամաբանության և գիտության այլ բնագավառների ուսումնասիրման համար:

Հատորում տեղ գտած հաջորդ գործը Եղիշի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկասիրությունն է<sup>7</sup>: Ոսկեդենիկ այս մատյանում հյուսիս լեզվով պատմվում է Հայոց Արշակունի թագավորության անկումից հետո Հայաստանում խմորված կացութան, 450–451 թթ. ժողովրդական մաքառումի հոգևոր և սոցիալ-քաղաքական նախադրյալների, պատերազմի ընթացքի և հարակից իրողությունների մասին: Հեղինակը կամեցել է ժողովրդի մեջ ներարկել համագային միություն և ամրապնդել գաղափարական մղումներ: Հեղինակի դիտարկումները նպատակ ունեն նաև բարձրացնել Հայ եկեղեցու իբրև պետականության կրողի, ժողովրդի միասնության դրոշակակրի հեղինակությունը: Դյուցազնաշունչ այս շախատության վրա նա թողել է սեփական ոգու դրոշմը: Երկը փաստառատ և արժանահավատ աղբյուր է դարաշրջանի պատմական իրողությունների հանդամանալից ուսումնասիրման համար:

Հատորում տեղ է գտել նաև Եղիշի «Արարածոց մեկնությունը», որի պահպանված հատվածների ամբողջացումը, հեղինակային պատկանելությունը ճշգրտել է ակադեմիկոս Լ. Խաչիկյանը՝ բանասիրական մանրագնին հետազոտությանը<sup>8</sup>: Այս գործը Հայ մտքի անդաստանում սուրբգրական աստվածաբանության երախայրիքն է: «Արարածոց մեկնությունը» հրատարակվում է

առաջին անգամ: Հատորում հավելվածաբար տրված են նաև Եղիշի վերաբերված կրոնական ուրիշ գրվածքներ:

Այնուհետև տրված են Աղվանից Վաչե թագավորին հայոց Գյուտ Արահեզացի հայրապետի (461–478) հղած ջատագովական թղթի քննական բնագիրը, Մ. դ. եկեղեցական մատենագիր Մամբե Վերծանողին վերագրված սուրբգրական թեմաներով հինգ ճառերը<sup>9</sup> և նրա մասամբ մեզ հասած «Մեկնություն քերականի» գործի մի հատվածը: Ապա հետևում է Անանիա վարդապետի մի ճառը, որը, ըստ երևույթի, շարադրվել է հունարան հայերենի զարգացման սկզբնափուլում (450–480 թթ.)՝ Անանիա Սյունեցու կողմից:

Ա հատորն ավարտվում է Հովհան Մանուկունի կաթողիկոսին (478–490) վերագրված ճառերով՝ վենետիկյան 1860 թ. հրատարակության հիման վրա<sup>10</sup>: Ծառերը նվիրված են եկեղեցու ներքին կյանքին, երկրի հասարակական հարաբերություններին, ժողովրդի բարոյաքաղաքական, կրոնական աշխարհընկալմանը:

«Մատենագիրք Հայոց» մատենաշարի Բ հատորում տեղ են գտել Ոսկեդարի Հայ մատենագրության երեք կարևորուն ներկայացուցիչների՝ Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու և Ղազար Փարպեցու երկասիրած գործերը:

Առաջինը Ագաթանգեղոսի «Պատմություն հայոց» երկն է<sup>11</sup>: Բնագրին նախորդող հակիրճ առաջաբանում իրավամբ նշվում է, որ թեև Ագաթանգեղոսն իրեն համարում է Հայոց Տրդատ Մեծ արքայի քարտուղար, սակայն իրականում հայագիր այդ պատմագիրն ապրել և իր երկը շարագրել է Մ. դ.:

<sup>6</sup> Ե զ ն ի կ Կ ո ղ ր ա ց ի. Եղծ աղանդոց, գլ. II, ԺԷ («Մատենագիրք Հայոց», հ. Ա, էջ 477):

<sup>7</sup> Վերապատմված է ըստ «Եղիշի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», աշխ. Ե. Տէր-Մինասյանի, Երևան, 1957:

<sup>8</sup> Լ. Խ ա չ ի կ յ ա ն. Եղիշի «Արարածոց մեկնությունը», Երևան, 1992:

<sup>9</sup> Հրատարակվում է ըստ «Մատենագրությունը նախնեաց մատենաշարի հետևյալ հատորի՝ «Կորին վարդապետի, Մամբեի Վերծանողի և Դաւիթ Անյաղթի Մատենագրությունը», Վենետիկ, 1833 (մի ճառը տեղ է գտել «Էջմիածին» հանդեսի 1992 թ. համարում (թիվ Ա–Բ–Գ):

<sup>10</sup> Տեառն Յովհաննու Մանուկունու շարադր հայրապետի ճառք. Վենետիկ, 1860:

<sup>11</sup> Ագաթանգեղայ Պատմություն Հայոց, աշխ. Գ. Տէր-Մկրտչեանի և Ստ. Կանայանցի. Տիգրիս, 1909:

Աշխատության մեջ արտացոլված են Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու, հայոց դարձի հետ առնչվող իրողությունները:

Բ հատորում ընդգրկված մյուս գործը պատմահայր Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկն է<sup>12</sup>: Խորենացին դասական առաջին հայ հեղինակն էր, որ խիզախեց թավանցել հայոց հեթանոսական անցյալի խորքերը և պարբերացնել հայոց պատմությունը՝ կուռ ու ստույգ ժամանակագրությամբ աղբյուրագիտական հարուստ ատաղձ մատուցելով հետազոտողներին: Փաստառատ այս երկը բուն 15 դարի քննություն գառնալով հայ պատմագիտական մտքի լուսատուն, մեր պատմական անցյալի նվիրագործումը:

Հատորում տեղ է գտել նաև Խորենացուն վերագրված հայոց Աշխարհացույցը, որի հեղինակի, նրա ապրած ժամանակի մասին հնչած կարծիքները տարամիտվում են, ուստի հատորի կազմողները ճիշտ են վարվել երկից առաջ գետեղելով համեմատաբար ընդարձակ առաջաբան, ուր տրված են խնդրահարույց հարցի շուրջ արծարծված թեր և դեմ տեսակետները: Փորձ է արվում նաև հիմնավորել այդ հույժ արժեքավոր գործը Խորենացուն վերագրելու կարծիքը, որը, իհարկե, չի կարող վերջնական լինել: Հատորում գետեղված է և Աշխարհացույցի տարբերակը՝ «Աշխարհացոյց է գարուն» վերտառությամբ (ինչն ինքնաբերաբար հուշում է, թե այն ստեղծվել է VII դ.):

Հատորում հրատարակված հաջորդ գործը Մովսես Խորենացու անունով մեզ հասած «Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց» գրվածքն է:

Մատենաշարի Բ հատորը եզրափակվում է Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան» գործերով<sup>13</sup>: «Հայոց պատմությունը» հույժ

արժեքավոր ու վստահելի սկզբնաղբյուր է V դ. Հայաստանում ծավալված իրադարձությունների մասին: Այդ երկում զգալի է հեղինակի դադափարամբությունը Խորենացու, եղիչի հետ: Խստաքննին ոգով է գրված Փարպեցու Թուրքը, որը զուրկ է նաև քաղաքական մտքի զորեղ շեշտերից: Այն նպաստում է ժամանակի կրոնական, ներեկեղեցական իրավիճակի ըմբռնմանը:

Անշուշտ, այսօրինակ մեծ ընդգրկումներ ունեցող մատենաշարի ձևաարկումը, իբրև առաջին փորձ, կապված է մեծ դժվարությունների հետ (առհասարակ առաջին փորձի կատարյալ լինելը քիչ է երաշխավորվում): Ուստի մեզ թույլ ենք տալիս անելու մի քանի դիտողություններ: Ցանկալի էր Գրիգոր Լուսավորչի անունով պահպանված կանոնախումբը գետեղել Ա հատորի սկզբում՝ «Յաճախապատում ճառքի» փոխարեն, որը, ինչպես ապացուցված է, հորինվել է հետագայում, Մեսրոպ Մաշտոցի կողմից<sup>14</sup>, ուստի ճիշտ կլիներ այն դնել Սահակ Պարթևի կանոններից հետո: Լավ կլիներ եղիչին վերագրված մանր գործերը ևս օժտել անհրաժեշտ ներածականով: Կարելի էր Ա հատորում ընդգրկել նաև Մամբրե Վերծանողի ցարդ պահպանված իմաստասիրական երկը («Հարցմունք Մամբրեի և պատասխանիք Դավթի»), որի ձևագիրը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում (ձեռ. №1555, Թ. 285<sup>ա</sup>–290<sup>ա</sup>): Անհրաժեշտ էր Կորյունի երկասիրությանը նվիրված մատենագիտության մեջ նշել նաև այդ գործի գերմաներեն թարգմանությունը<sup>15</sup>: Եզնիկ Կողբացու «Եղծ աղանգոցից» հետո կարելի էր տալ նաև նրան վերագրված խրատները: Հատորներում ամփոփված գործերին առընթեր տրված «տառանիչեր բաղդատված ձեռագրերի» կապակցությունն ուղղելի է «գործածված տառանիչերի և համառոտագրությունների

նեան, աշխ. Գ. Տէր-Մկրտչեանի և Առ. Մալխասեանի, Տփղիս, 1904:

<sup>14</sup> Մ. Ա. Բ. Ե. Ղ. Յ. Երկեր, Գ, Երևան, 1968, էջ 138:

<sup>15</sup> G. W i n k l e r. Koriwns Biographie des Mesrop Mastoc. Roma, 1994.

<sup>12</sup> Մովսեսի Խորենացու Պատմութիւն Հայոց, աշխ. Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան. Տփղիս, 1913:

<sup>13</sup> Տե՛ս Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոն-

ցանկ» ձևով, քանի որ խնգրո առարկա ցանկը ներառել է ոչ միայն ձեռագիր, այլև տպագրված բնագրերը: Սահակ Պարթևի կանոնախմբի ցանկում կրկնված է խժ հոդվածը, թեև ունի իր հիմնավորումը. լավ կլիներ գա տալ նշված կանոնախմբի ներածականում:

«Մատենագիրք Հայոց» մատենաշարը կարևոր քայլ է բազմադարյան Հայ գրական կոթողների հրատարակման շնորհակալ գործում: Անշուշտ, նման ձեռնարկումները բազմապատկում են ազգի հոգևոր կորովը. մեծացնում գոյատևելու գորությունը:

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ